

ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԿՈՆՖԼԻԿՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Գ.Մ. Քեռյան

ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի վարիչ,
քաղաքական գիտ.դոկտոր, պրոֆեսոր

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Չողվածում բացահայտված են Վրաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի միջև սահմանների դելիմիտացիայի և դեմարկացիայի հիմնական խնդիրները: Առկա միջ-պետական պայմանագրերի և հրապարակված փաստաթղթերի վերլուծության հիման վրա ներկայացված են չճանաչված պետությունների սահմանների կոնֆլիկտայնության պատճառներն ու էությունը:

Բանալի բառեր. *Հարավային Կովկաս, պետական սահմաններ, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, սահմանների կոնֆլիկտայնություն, դելիմիտացիա, դեմարկացիա*

Կովկասն ամբողջությամբ և հյուսիսային, և հարավային հատվածներով արդի աշխարհի առավել բարդ կոնֆլիկտային տարածաշրջաններից է: Կովկասյան կոնֆլիկտային հանգույցը այսօր գտնվում է քաղաքական հետազոտական կենտրոնների ուշադրության կենտրոնում, որովհետև դեռ ամեն ինչ չէ, որ բացահայտված է և լիարժեք լուսաբանված: Հետազոտողների մեծ մասը կովկասյան տարածաշրջանի բարդությունը իրավացիորեն կապում են աշխարհաքաղաքական շահերի բախման, արտաքին ուժերի ապակայունացնող ազդեցության, էթնոքաղաքական հակամարտությունների և ազգային կրոնական խայտաբղետության հետ: Տարածաշրջանում առկա են հարավօսեթական, արևելադարձական և դարաբաղյան չլուծված հակամարտությունները, որոնք միջազգային իրադրության որոշակի փոփոխությունների ազդեցությամբ կարող են նորից դառնալ ռազմական բախումների օջախներ: Կրոնա-էթնիկական խայտաբղետությունը իր հերթին պարարտ հող է ստեղծում այդպիսի իրավիճակի ստեղծման համար: Եթե Հայաստանը մեծամասամբ մոնոէթնիկ պետություն է, նույնը չի կարելի ասել Ադրբեջանի, Վրաստանի և ՌԴ կազմում գտնվող հյուսիսկովկասյան ինքնավար հանրապետությունների մասին: Նկարագրելով Կովկասի սոցիոմշակութային, կրոնական և էթնիկական խայտաբղետությունը, հե-

տազոտողներից Յու. Ա. Ժդանովը նշում է, որ աշխարհում չկա մեկ այլ տարածաշրջան, որտեղ համեմատաբար ոչ մեծ տարածքում կուտակված լինեն պատմական, մշակութային, կրոնական և ազգային հոգեբանական առանձնահատկություններով իրարից տարբերվող հարյուրավոր ազգեր Միայն Դաղստանում ապրում են քառասունից ավելի ժողովուրդներ և էթնիկ խմբեր¹:

Միանշանակ ընդունելով կոնֆլիկտայնության պահպանման գործում արտաքին ուժերի և աշխարհաքաղաքական գործոնների նշանակությունը, մեր կարծիքով առանձնակի ուշադրությամբ պետք է ուսումնասիրել տարածաշրջանային քաղաքական կլիմայի վրա ազդող ներքին չլուծված խնդիրները, որոնք կարող են գեներացնել նոր վտանգավոր ռազմաքաղաքական գործընթացներ, խորացնել կոնֆլիկտայնությունը և նոր անվտանգային մարտահրավերների առաջացման պատճառ դառնալ ինչպես հարավկովկասյան պետությունների, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության համար:

Ստացվեց այնպես, որ վերջին մեկ երկու տարվա ընթացքում մեր ուշադրության կենտրոնում հայտնվեցին Կովկասում պետական և ադմինիստրատիվ սահմանների ճանաչման մասին մի քանի աշխատություններ և աղբյուրներ, որոնք հուշեցին սույն ուսումնասիրության ներկայացման անհրաժեշտությունը: Մեր համոզմամբ չճանաչված սահմանները կարող են դառնալ նոր լարվածության աղբյուր, եթե նույնիսկ ապագայում հաջողվի հակամարտությունների լուծման շուրջ ինչ որ փասթաթղթեր ստորագրել: Բաց թողնելով ՌԴ Յուսիսկովկասյան Դաշնային օկրուգի մեջ ընդգրկված ինքնավար հանրապետությունների, մասնավորապես Չեչնիայի և Ինգուշեթիայի միջև առկա սուր սահմանային վեճերը, դիտարկենք հարավկովկասյան միջպետական սահմաններում իրավիճակը կոնֆլիկտայնության տեսանկյունից:

Սկզբում նշենք, որ կովկասյան միջպետական սահմանները բավականին առանձնահատուկ ձևավորման պատմություն ունեն: Դրանք հիմնականում ձևավորվել են մոտ երկու հարյուր տարվա ընթացքում Ռուսական կայսրության և Խորհրդային Միության ներսում իրականացված վարչական և վարչաքաղաքական բարեփոխումների և փոփոխությունների ընթացքում: ԽՍՀՄ փլուզումից և հարավկովկասյան հանրապետությունների անկախության

¹ *Տե՛ս Жданов Ю.А. Солнечное сплетение Евразии // Известия вузов. Северо-Кавказский регион. Общественные науки. 1998. №2. - С. 29.*

հռչակումից հետո սկսվեց սահմանների դելիմիտացիայի² (սահմանագծում) և դեմարկացիայի³(սահմանազատում) գործընթացը: Նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշումների մի մասը ընդունվել է հապճեպ, առանց վերջնական ճշտումների, որի հետևանքով սահմանների ուղղության մասին համաձայնությունները հետագայում վերանայվել են: Զգացվում է սահմանագծումներից առավելագույն օգուտներ քաղելու Վրաստանի և Ադրբեջանի ձգտումը, բայց նաև պետք է ընդունել հյուսիսից ռուսական ազդեցության գործոնը:

Կոնֆլիկտայնության բարձր աստիճանով հատկապես առանձնանում են Վրաստանի պետական սահմանները: Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում փաստացիորեն Վրաստանի դե ֆակտո և դե յուրե սահմանները մեծամասամբ չեն համընկնում: 2008թ. ռուս-վրացական պատերազմի արդյունքում ՌԴ-ի կողմից ճանաչված Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հետ սահմանները Վրաստանի իշխանությունները երբեք չեն դիտարկել որպես միջպետական սահման, այն համարում են ներքին ադմինիստրատիվ և բնականաբար այստեղ դելիմիտացիայի և դեմարկացիայի մասին խոսելն ավելորդ է: Աբխազիայի խորհրդարանը 2008թ. օգոստոսին հանրապետության պետական սահմանի մասին որոշում ընդունեց, սակայն մինչ օրս հայտնի պատճառներով այստեղ դելիմիտացիա և դեմարկացիա չի իրականացվել և սահմանը շարունակում է մնալ կոնֆլիկտային գոտի: Այն կարելի է նշել միայն հենվելով սահմանային արգելապատնեշների վրա: Հարավօսեթական իշխանությունները 2009 թ.-ին փորձեցին համաձայնության եզրեր գտնել և Վրաստանի հետ սահմանագծում իրականացնել: Այդ նպատակով ստեղծվեց պետական հանձնաժողով և հատուկ դիմում հղվեց Վրաստանի արտաքին գործերի նախարարությանը: Իհարկե պաշտոնական Թբիլիսին անպատասխան թողեց այդ դիմումը և հարավօսեթական պետական հանձնաժողովը սահմանների դելիմիտացիան և դեմարկացիան անցկացրեց միակողմանիորեն, հիմք ընդունելով խորհրդային ժամանակներից եկող 1984 թ. ադմինիստրատիվ քարտեզներում ամրագրված

² Ծանոթություն, **դելիմիտացիա** - սահմանների ընդհանուր ուղղության և դասավորվածություն ճշտում միջպետական բանակցությունների միջոցով

³ Ծանոթություն, **դեմարկացիա** - պետական սահմանի անցկացումը տեղանքի վրա հատուկ սահմանային նշաններով

նախկին Հարավային Օսեթիայի ինքնավար մարզի տարածքի սահմանները⁴: Այս հատվածում փաստացիորեն առկա է Վրաստանի կողմից չճանաչված 400 կմ ձգվող վրաց-հարավօսեթական սահման: Այստեղ պահպանվող լարվածությունը և սահմանային անցումների վերաբերյալ համաձայնագրերի բացակայությունը ստիպեց հարավօսեթական կողմին 2015 թ. մայիսից փակել իր սահմանը Վրաստանի հետ: Հակառակ ուղղությամբ ընթացավ գործընթացը Ռուսաստանի հետ: 2015 թ. փետրվարին Հարավային Օսեթիան և ՌԴ-ն կնքեցին պայմանագիր պետական սահմանի մասին⁵:

Ռուս-վրացական հարաբերությունների մշտական լարվածությունը ազդել է նաև սահմանային վեճերի լուծման վրա: Բավականին սուր է Վերին Լարսի սահմանային անցակետի շրջանում մեկուկես կիլոմետրանոց հատվածի շուրջ ծագած անհամաձայնությունը: Այս անցակետը ռազմավարական նշանակություն ունի Ռուսաստանի համար, որովհետև այն մնացել է դեպի Հարավային Կովկաս ձգվող միակ սահմանային գործող ճանապարհը: Բնականաբար այստեղ սահմանային կարգավորումներով առանձնակի շահագրգռված է հատկապես Հայաստանը: Վրաստանը Խորհրդային Ռուսաստանի հետ սահմանների վերաբերյալ ունեցել է պայմանագիր (կնքված 1920 թ.), սակայն այն չեղարկվել է Խորհրդային կարգերի հաստատումից հետո: Ներկայումս պաշտոնական Թբիլիսին հենվելով այդ պայմանագրի վրա, Վերին Լարսի սահմանային հատվածներում տարածքային պահանջներ է ներկայացնում Ռուսաստանին (Հյուսիսային Օսեթիայի հետ սահմանին): Փաստացիորեն ռուս-վրացական սահմանային խնդիրների լուծումը առջմ մնում է և դեռ երկար ժամանակ կմնա կոնֆլիկտային նաև ՌԴ կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչման պատճառով: Այս հանգամանքը վրացական կողմը դիտարկում է որպես իր տարածքային ամբողջականության նկատմամբ կոպիտ ոտնձգություն և ռուս-աբխազական ու ռուս-հարավօսեթական սահմանների դեղինիտացիան ու դեմարկացիան համարում է միայն Վրաստանի իրավասության ենթակա գործընթաց:

Կոնֆլիկտայնության համեմատաբար ցածր մակարդակ ունի վրաց-

⁴ *Տե՛ս Южная Осетия временно закрыла границу с Грузией// Интернет-портал «PanARMENIAN.Net» [Электронный ресурс]. <http://www.panarmenian.net/rus/news/192748/>*

⁵ *Տե՛ս Южная Осетия и Россия подписали договор о государственной границе// Информационное агентство «ОСинформ». [Электронный ресурс]. <http://osinform.ru/49026-yuzhnaya-osetiya-i-rossiya-podpisali-dogovor-o-gosudarstvennoy-granice.html>*

ադրբեջանական սահմանը: Դելիմիտացիան այստեղ սկսվել է 1996 թ.-ից: Այստեղ խնդիրը ԽՍՀՄ ժամանակներից եկող վարչական սահմանը ճշտված միջպետական սահման դարձնելն էր: Եղած տեղեկատվությունը վկայում է, որ մինչև 2005 թ. վրաց ադրբեջանական պատվիրակությունների միջև բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել, որոնց ընթացքում պարզվել են նախկին ադմինիստրատիվ սահմանը միջպետական դարձնելու գործընթացում վիճելի հատվածները: Ի հայտ եկած սահմանային խնդիրների մասին բարձրաձայնել է Վրաստանի պետական սահմանի պահպանության դեպարտամենտի ղեկավարությունը⁶ : Մինչև 2011 թ. համաձայնեցված էր սահմանի 300 կմ. հատվածը, սակայն մինչև 2014 թ. հստակ սահմանագծումը չէր ավարտվել, դեռևս վրաց-ադրբեջանական սահմանի որոշ հատվածներ շարունակում են մնալ վիճելի⁷ :

Նախկին ադմինիստրատիվ սահմանը միջպետական վերածելու գործընթացում համանման խնդիրներ են առաջացել ռուս-ադրբեջանական սահմանագծման ժամանակ: Այս սահմանը առավել կոնֆլիկտային է վրաց-ադրբեջանական սահմանի հետ համեմատ: Ադրբեջանի սահմանը Ռուսաստանի հետ, դա Դաղստանի ինքնավար հանրապետության հետ նույն սահմանն է, որի դելիմիտացիան և դեմարկացիան բախվում է ազգային խնդիրների հետ: Դրա էությունը Ադրբեջանում և Դաղստանում ապրող լեզգիների տարածքային միավորման խնդիրն է, նրանց երբեմն բացահայտ, երբեմն թաքուն պայքարի նպատակն է հնարավորինս հասնել երկու հատվածների ազատ հաղորդակցությանը, ապագայում տարածքային միավորման ակնկալիքով: Ինչևիցե Ադրբեջանին և Ռուսաստանին հաջողվել է 2010 թ. հոկտեմբերին միջպետական պայմանագիր կնքել սահմանների վերաբերյալ և ավարտել դեմարկացիան⁸: Բայց կոնֆլիկտայնությունը լեզգիների հարցով դեռ պահպանվում է:

Ադրբեջանի համար սահմանային խնդիրները Վրաստանի և Ռուսաստանի

⁶ *ՏԷՍ և Գրուչիա – Ազերբայձյան: սահմանային անհամապատասխանություններ // Ինֆորմացիոննո ԲԵՂՆՄՄ. [Էլեկտրոննոյ ԲԵՂՆՄՄ]. www.regnum.ru/news/482332.html*

⁷ *Գրուչիա և Ազերբայձյան սոցլասովել 300 կմ սահմանային // Ինֆորմացիոննո ԲԵՂ ՄԱՍԿԱՍՄՍ. [Էլեկտրոննոյ ԲԵՂՆՄՄ]. <http://www.newcaucasus.com/index.php?newsid=4606>*

⁸ *ՏԷՍ և Մինիստրնոյ Ինոստրաննոյ ԴԵՂՍԻ և Ազերբայձյան ԲԵՂՂՂՂՂ Գրամոտան Եր Գոսսահմանային // Ինֆորմացիոննո- ԲԵՂՂՂՂՂ ԲԵՂՂՂՂՂ. [Էլեկտրոննոյ ԲԵՂՆՄՄ]. <http://www.rosbalt.ru/main/2011/07/18/870215.html>*

հետ շատ ավելի լուծելի են, քան այն խնդիրները, որ նա ունի Հայաստանի հետ ղարաբաղյան հակամարտության պատճառով: Փաստացիորեն մինչև այժմ հայ-ադրբեջանական սահմանի ճշտում և միջպետական պայմանագիր չկա և այս սահմանը ամբողջությամբ կարելի է համարել կոնֆլիկտային: Պաշտոնական Բաքուն գտնում է, որ Հայաստանի հետ սահմանների դելիմիտացիան և դեմարկացիան պետք է հենվի ԽՍՀՄ կազմում երկու հանրապետությունների միջև եղած նախկին ադմինիստրատիվ սահմանի հիման վրա, ներառելով նաև նախիջևանյան հատվածը: Այս հարցում չարչրկվում են ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի չորս բանաձևերը⁹, որով իբր չճանաչված Արցախի հանրապետության տարածքը Հայաստանի կողմից օկապացված տարածք է և ներկայիս շփման գիծը չի կարող դիտարկվել որպես պետական սահման:

Հայաստանի պետական սահմանները Թուրքիայի և Իրանի հետ մնում են նախկինում ԽՍՀՄ-ի հետ իրականացված նույն դեմարկացիոն գծով և փաստացիորեն դեռևս դրանց վերանայման հարց չի բարձրացվել: Այստեղ պետական սահմանը որոշող փասթաթղթային փաթեթը կազմված է ԽՍՀՄ-Իրան, ԽՍՀՄ-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների ստեղծման պահից մինչև 1991 թվականը կնքված պայմանագրային փասթաթղթերից: Սահմանագծման առումով հայ-իրանական հատվածում կոնֆլիկտայնություն չկա, իսկ հայ-թուրքական հատվածը կարող է վերանայվել եթե ապագայում հնարավորություններ ստեղծվեն 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վերանայման համար: Ղարաբաղյան հակամարտության գոտում ռազմական գործողությունների ծավալման հետ կապված Թուրքիան 1993 թ.-ից սկսած միակողմանիորեն փակել է սահմանը Հայաստանի հետ և միշտ շեշտադրումներ է անում սահմանների անխախտելիության ճանաչման վրա: Ի դեպ ելնելով անվտանգային խնդիրներից և Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցության անհրաժեշտությունից, փոխադարձ համաձայնությամբ Իրանի և Թուրքիայի հետ ՀՀ սահմանների

⁹ *St'u The situation relating to Nagorny-Karabakh// Официальный сайт Организации Объединенных Наций. [Электронный ресурс]. http://www.un.org/en/sc/reperoire/89-92/Chapter%208/EUROPE/item%2019_Nagorny-Karabakh.pdf*

հսկողությունն իրականացնում են ՌԴ սահմանապահ զորամիավորումները¹⁰:

Հայաստանի ու Վրաստանի հետ սահմանը որոշող փաթեթը կազմված է 1920թ-ից մինչև 1945թ. ձեւավորված փաստաթղթերից, որոնցում նշված են հանրապետությունների սահմանների գրաֆիկական ուրվագծերն ու դրանց ճշգրտումները: Սահմանագծման սահմանազատման գործընթացում ընդհանուր առմամբ Վրաստանի հետ կոնֆլիկտայնությունը ևս բացակայում է¹¹: Այստեղ երկու երկրները հասել են բավականին լայն փոխըմբռնման և համագործակցության կնքելով նաև սահմանային ներկայացուցիչներ ունենալու մասին համաձայնագիր¹² :

КОНФЛИКТНОСТЬ ГРАНИЦ В ЮЖНОМ КАВКАЗЕ

Г.М. Керян

АННОТАЦИЯ

В данной статье выявляются существующие проблемы делимитации и демаркации межгосударственных границ Грузии, Армении и Азербайджана. На основе анализа существующих межгосударственных договоров и опубликованных документов, представлены причины и сущность конфликтности границ непризнанных государств.

Ключевые слова: Южный Кавказ, государственные границы, Грузия, Армения, Азербайджан, конфликтность границ, делимитация, демаркация

BORDER CONFLICTS IN THE SOUTH CAUCASUS

G.M. Keryan

SUMMARY

Article identifies the existing problems of delimitation and demarcation of the interstate borders of Georgia, Armenia and Azerbaijan. Based on the analysis of existing international treaties and published documents, the causes and essence of the conflict of the borders of unrecognized States are presented.

Key words: South Caucasus, state borders, Georgia, Armenia, Azerbaijan, conflict of borders, delimitation, demarcation

¹⁰ *Еще раз о совместной охране границы Армении// Интернет-портал «Центр поддержки русско-армянских стратегических и общественных инициатив». [Электронный ресурс]. <http://russia-armenia.info/node/2263>*

¹¹ *ՏԵ՛ս <https://armenpress.am/arm/print/571140/>*

¹² *ՏԵ՛ս Գամաձայնագիր ԳԴ Կառավարության և Վրաստանի Կառավարության միջև՝ սահմանային ներկայացուցիչների՝ սահմանային կոմիսարների գործունեության մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=115419>*